ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 25

«18» 06 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 499-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշման 4-րդ գլուխը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 440-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխան հրամաններով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող բաց մրցույթի և պետական ծառայողների գործունեության գնահատման թեսթավորման փուլի հարցաշարը, արտամրցութային կարգով նշանակում կատարելու, մրցույթ անցկացնելու, մրցույթի արդյունքները բողոքարկելու կարգը, մրցույթի անցկացման ու մրցույթի արդյունքների բողոքարկման հանձնաժողովները և հանձնաժողովների աշխատակարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայողների անձնական գործերի վարման կարգը ուժը կորցրած ճանաչելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայողների անձնական գործերի վարման կարգը սահմանելու մասին» N 94 հրամանը,

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի փետրվարի 11-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող բաց մրցույթի և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայողների գործունեության գնահատման թեսթավորման փուլի հարցաշարը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2009 թվականի փետրվարի 28-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 19 հրամանը,

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար արտամրցութային կարգով նշանակում կատարելու, մրցույթ անցկացնելու, մրցույթի արդյունքները բողոքարկելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի N 87 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 89 հրամանը,

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի նոյեմբերի 11-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման ու մրցույթի արդյունքների բողոքարկման հանձնաժողովներ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի նոյեմբերի 11-ի N 88 և 2017 թվականի հոկտեմբերի 6-ի N 76 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 101 հրամանը,

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի նոյեմբերի 11-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման ու մրցույթի արդյունքների բողոքարկման հանձնաժողովների աշխատակարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի դեկտեմբերի 22-ի N 86 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102 հրամանը:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ